

Թեմա	Հարցի համարը	Հարց	Պատասխան
Օրենսդրություն	1	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե ՀՀ Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ապա ՀՀ Կենտրոնական բանկը պետք է առաջնությունը տա	ՀՀ-ում դրամի փոխարժեքի կայունության ապահովմանը
			ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, բնականոն գործունեության ապահովմանը
			ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովմանը
			Ճիշտ պատասխանը նշված չէ
	2	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են.	ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովումը
			ՀՀ բանկային համակարգի կայունության ապահովումը
			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	3	Նշել սխալ պատասխանը. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունում ստուգում իրականացնելիս վարկային կազմակերպությունը պարտավոր է	ապահովել ԿԲ վերստուգող խմբի անարգել մուտք և ելք վերստուգվող վարկային կազմակերպության շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ, այդ թվում՝ սերվերային և համակարգչային, ծրագրային ապահովման այլ սենյակներ,
			ԿԲ վերստուգող խմբին տրամադրել վարկային կազմակերպության հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները,
			ԿԲ վերստուգող խմբին հատկացնել աշխատանքային տարածք, որն ապահովված է աշխատելու համար բավարար պայմաններով, ինչպես նաև տեխնիկական, կապի և այլ անհրաժեշտ միջոցներով,
			կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների ցանկացած պահանջները:
	4	Վարկային կազմակերպությունները չեն կարող թողարկել.	բանկային վկայագրեր,
			փոխանցելի մուրհակներ,
			հասարակ մուրհակներ,
			արտոնյալ բաժնետոմսներ:
	5	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող ստեղծվել.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպչիրավական ձևով,
			բաժնետիրական ընկերության կազմակերպչիրավական ձևով,

			առևտրային կոոպերատիվ ընկերության կազմակերպչի րավական ձևով,
			լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպչի րավական ձևով:
	6	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը, բացառությամբ խնայողական միությունների, կարող է ստեղծվել, որպես.	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, բաժնետիրական ընկերություն, առևտրային կոոպերատիվ ընկերություն, տնտեսական ընկերակցություն:
	7	Ու՞մ կողմից կարող են սահմանափակվել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնությունները.	ՀՀ արժեթերի հանձնաժողովի կողմից, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից, ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ճիշտ պատասխանը նշված չէ:
	8	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարկային կազմակերպության գործունեության համար կարող է սահմանել սահմանափակումներ	թույլատրելով նրանց կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների մի մասի իրականացումը, արգելելով նրանց կողմից օրենքով սահմանված բոլոր ֆինանսական գործառնությունների իրականացումը, սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնցից վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ ներգրավել, սահմանափակելով այն անձանց շրջանակը, որոնց շրջանակում վարկային կազմակերպությունը կարող է միջոցներ տեղաբաշխել
	9	Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեության համար սահմանվող սահմանափակումները պետք է նույնը լինեն.	բոլոր վարկային կազմակերպությունների համար, միևնույն տիպի վարկային կազմակերպությունների միևնույն ֆինանսական գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունների միևնույն կազմակերպչի րավական ձևով ստեղծված վարկային կազմակերպությունների համար:

	10	Նշել սխալ պատասխան. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր (խմբեր) են համարվում.	խնայողական միությունները, լիզինգային կազմակերպությունները, ֆակտորինգային կազմակերպությունները, որպես վարկային կազմակերպություն վերագրանցված կազմակերպությունները:
	11	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր (խմբեր) չեն համարվում.	վարկային միությունները, խնայողական միությունները, ներդրումային ընկերությունները, ֆակտորինգային ընկերությունները:
	12	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գործունեություն է համարվում, որպես ձեռնարկատիրական գործունեություն.	ավանդների ներգրավումը վարկերի տրամադրումը վճարային արժեթղթերի հրապարակային թողարկումը (բացառությամբ ներդրումային հիմնադրամների կողմից թողարկված արժեթղթերի), փոխառությունների ներգրավումը
	13	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում.	Հայաստանի Հանրապետությունից, բացառապես իրենց մասնակիցներից, իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից, միջազգային կազմակերպություններից:
	14	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միությունները դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից	իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին և այլ անձանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից և դրանք տրամադրում իրենց մասնակիցներին, և դրանք տրամադրում նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, և դրանք տրամադրում նրանց:

	15	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, արգելվում է վարկային կազմակերպության լիցենզիա չունեցող անձանց կողմից «Վարկային կազմակերպություն» բառակապակցության կամ դրա անունը պարունակող օգտագործումը	հրապարակային օֆերտայում, գովազդներում, իրենց անվանման մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ բառակապակցության օգտագործման իմաստից բխում է, որ խոսքը վարկային գործունեությանը չի վերաբերվում, գովազդներում, և նմանատիպ գովազդ իրականացնողներին աջակցումը:
	16	Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը հաստատվում է	ՀՀ կենտրոնական բանկի կողմից, վարկային կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, վարկային կազմակերպության գործադիր մարմնի կողմից:
	17	Վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգով, չի սահմանվում վարկային կազմակերպության	միջոցների ներգրավման և տեղաբաշխման մեթոդները գործունեության տեսակը, ոլորտը, գործունեության կարգը կանոնադրական կապիտալի չափը:
	18	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է.	Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին, օտարերկրյա առևտրային բանկում բացված ընթացիկ հաշվին, ճիշտ պատասխանը նշված չէ:
	19	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը վճարվում է.	Կենտրոնական բանկում բացված ընթացիկ հաշվին, այլ վարկային կազմակերպությունում բացված կուտակային հաշվին, օտարերկրյա առևտրային բանկում բացված կուտակային հաշվին, ճիշտ պատասխանը նշված չէ:

	20	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության գրանցումը և լիցենզավորումը մերժվում է, եթե.	ամբողջությամբ վճարված չէ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը, վարկային կազմակերպությունը դրան նախորդող մեկ տարվա ընթացքում խախտել է հիմնական տնտեսական նորմատիվներից գոնե մեկը վարկային կազմակերպության գործունեության վայրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին, վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը
	21	ԿԸ-ն գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությանը կամ մերժում է դրա գրանցումը և լիցենզավորումը օրենքով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից	երկու ամսվա ընթացքում, երկու շաբաթվա ընթացքում, մեկ ամսվա ընթացքում, 15 օրվա ընթացքում:
	22	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ.	ՀՀ պետական ռեգիստրում նրա գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու պահից, Կենտրոնական բանկում գրանցվելու պահից երեք օր Կենտրոնական բանկ գրանցման դիմում ներկայացնելու պահից, ճիշտ պատասխանը նշված չէ:
	23	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝	ներկայացվել են կեղծ տեղեկություններ, ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ, վարկային կազմակերպության ղեկավարները չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը, վարկային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք չեն ստացել Կենտրոնական բանկի համաձայնությունը
	24	Նշեք սխալ տարբերակը. ԿԸ-ն մերժում է վարկային կազմակերպության գրանցումն ու լիցենզավորումը, եթե՝	ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ներկայացված փաստաթղթերը թերի են, ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն,

			վարկային կազմակերպության ղեկավար անձինք անցյալում վարկային գործունեությամբ չեն զբաղվելը:
	25	Վարկային կազմակերպության լիցենզիան տրվում է՝	տաս տարով, երեք տարով, հինգ տարով, անժամկետ:
	26	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Վարկային կազմակերպության լիցենզիան չի կարող՝	օտարվել, գրավադրվել, այլ անձանց տրվել օգտագործման, անվավեր ճանաչվել:
	27	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյան,	որը անվճար տրամադրվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բանկերին և վարկային կազմակերպություններին որը բաց է համընդհանուր ծանոթացման համար, որում ներառվում են բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որում ներառվող տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարության նորմատիվ ակտերը գրանցող կառավարության լիազորած մարմինը:
	28	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունը կարող է ՀՀ տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել	ՀՀ ԿԲ դրանց գրանցման դիմումի ներկայացման պահից, ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորման պահից, ՀՀ պետական ռեգիստրում գրանցման պահից, ՀՀ ԿԲ-ում գրանցման պահից
	29	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը սահմանվում է.	Կենտրոնական բանկի ներքին իրավական ակտերով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Կենտրոնական բանկի անհատական բնույթի իրավական ակտերով, բոլոր պատասխանները սխալ են:
	30	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման դիմումը Կենտրոնական բանկը բավարարում կամ մերժում է.	երկու ամսվա ընթացքում, երկու շաբաթվա ընթացքում, մեկ ամսվա ընթացքում,

			մեկ ամսվա ընթացքում, սակայն Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ դիմումի քննության մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել:
31	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դեպքում Կենտրոնական բանկը տալիս է.		գրանցման վկայական համապատասխան լիցենզիա, հաշվառման վկայական, իր համաձայնությունը:
32	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումի մերժման դեպքում Կենտրոնական բանկը		ետ է վերադարձնում դիմումը վարկային կազմակերպությանը, եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը, մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը, ետ է վերադարձնում դիմումը և մերժման հիմքերի մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է վարկային կազմակերպությանը:
33	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի գրանցման դիմումը, եթե՝		ներկայացվել են կեղծ տեղեկություններ, ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ, ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն, մասնաճյուղի հիմնադրումն աննպատակահարմար է:
34	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.		տրամադրել երաշխիքներ, ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ, մատուցել ֆինանսական խորհրդատվություն, գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ:
35	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել		բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով, բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով,

			բացառապես սպառողական վարկեր և փոխառություններ, իսկ ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառությունները՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով,
			բոլոր պատասխանները սխալ են
	36	Վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության իմաստով սպառողական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումն ու կատարումը, որով	պարտապանը ստացված միջոցները կարող է օգտագործել ինչպես սպառողական, այնպես էլ ձեռնարկատիրական նպատակներով,
			պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես սպառողական նպատակներով, որոնք կապված չեն իր ձեռնարկատիրական գործունեության հետ,
			պարտապանը ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես ձեռնարկատիրական նպատակներով,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	37	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը չի կարող.	տրամադրել վարկեր և փոխառություններ,
			իրականացնել արտադրական, առևտրային կամ յիջենգավորման ենթակա այլ գործունեություն,
			մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ,
			տրամադրել երաշխիքներ:
	38	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությանն արգելվում է իրականացնել	առևտրային գործունեություն,
			արտադրական գործունեություն,
			պարտքերի հետստացման գործունեություն
			սպահովագրական գործունեություն:
	39	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության.	գործադիր տնօրենը,
			վերստուգիչ հանձնաժողովի անդամները,
			գլխավոր հաշվապահը,
			մասնաճյուղի կառավարիչը:
	40	Նշել սխալ տաբերակը. Վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության՝	խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները,
			գործադիր տնօրենը, նրա տեղակալը,
			գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, մասնաճյուղի գլխավոր հաշվապահը, մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը,
			վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները:

	41	Նշել սխալ տարբերակը. Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել.	<p>դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,</p> <p>դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք,</p> <p>սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք,</p> <p>անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես վկաներ</p>
	42	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ չեն կարող լինել`	<p>դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք,</p> <p>սնանկ ճանաչված և չմարված պարտավորություններ ունեցող անձինք,</p> <p>քրեական գործով որպես կասկածյալ, մեղադրյալ , վկա կամ ամբաստանյալ ներգրավված անձինք</p> <p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանափակ գործունակ ճանաչված անձինք</p>
	43	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված անձանցից որի որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները չի սահմանում ՀՀ կենտրոնական	<p>վարկային կազմակերպության վարչության նախագահի տեղակալի,</p> <p>վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի տեղակալի,</p> <p>վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի,</p> <p>կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի:</p>
	44	Նշված պնդումներից որն է սխալ. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	<p>անձը կարող է վարկային կազմակերպության ղեկավար աշխատել Կենտրոնական բանկում գրանցվելու պահից,</p> <p>վարկային կազմակերպության ղեկավար գրանցվելու համար անձը պետք է ունենա վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման, մասնագիտական համապատասխանության վկայական,</p> <p>վարկային կազմակերպության ղեկավարի գրանցումը կատարվում է դիմելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,</p> <p>վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական</p>
	45	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են իրենց կանոնադրության մեջ պարտադիր ներառել դրույթներ.	<p>տնօրենների խորհրդի և վերստուգիչ խմբի ֆունկցիաների տարանջատման վերաբերյալ,</p>

			արտաքին աուդիտի իրականացման մեխանիզմների վերաբերյալ,
			հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների ներկայացման սկզբունքների վերաբերյալ,
			գլխավոր հաշվապահի և գլխավոր ֆինանսական մասնագետի ֆունկցիաների վերաբերյալ:
	46	ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր չեն ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել՝	գործադիր տնօրենի փոփոխությունը, կանոնադրությունում կատարված փոփոխությունները,
			վարկային կազմակերպության վարկային վարչության պետի փոփոխությունը,
			վերստուգիչ հանձնաժողովի անդամների կազմում կատարված փոփոխությունները:
	47	Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել.	վարկային կազմակերպության հիմնադիրների նախնական համաձայնությամբ, Կենտրոնական բանկի և ՀՀ արդարադատության նախարարության նախնական համաձայնությամբ, առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:
	48	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ունեցող անձ է համարվում վարկային կազմակերպության	ընդհանուր կապիտալի 10 և ավելի տոկոս մասնակցություն ունեցող անձը, կանոնադրական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը, հիմնական կապիտալի 10 և ավելի տոկոսը գերազանցող մասնակցություն ունեցող անձը, ճիշտ տարբերակը նշված չէ:
	49	Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով նշանակալից է համարվում վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի կանոնադրական կապիտալի	տաս և ավելի տոկոսը կազմող մասնակցություն, տասամեկ տոկոսը գերազանցող մասնակցություն,
			մինչև տաս տոկոսը, սակայն Կենտրոնական բանկի կարծիքով այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հնարավորություն ունի կանխորոշել վարկային կազմակերպության կառավարման մարմինների որոշումները,
			մինչև քսան տոկոսը կազմող մասնակցություն:

	50	Նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից, Կենտրոնական բանկը քննում է դրանք	մեկամսյա ժամկետում, որը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով, եռամսյա ժամկետը չգերազանցող ժամկետում, մեկշաբաթյա ժամկետում, տասնօրյա ժամկետում:
	51	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը մերժելու դեպքում Կենտրոնական	դիմումը ետ է վերադարձնում դիմողին եռօրյա ժամկետում հիմնավորում է իր որոշումը, մերժման հիմքերի մասին հնգօրյա ժամկետում տեղեկացնում է դիմողին, ընդ որում, այդ ժամկետը կարող է ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցվել, բայց ոչ ավելի, քան 5 օր ժամկետով: մերժման մասին որոշում կայացնելու պահից տասնօրյա ժամկետում ծանուցում է դիմողին:
	52	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝	անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն, անձը ճանաչվել է սնանկ և ունի չմարված պարտավորություններ, անձը քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ կամ վկա, անձը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրվելիք միջոցները Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով ձեռք է բերել ոչ օրինական ճանապարհով:
	53	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը մերժում է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե՝	անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն, անձն այլ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունի, տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը:
	54	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ անձանցից որը չի համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ.	վարկային կազմակերպության գործադիր տնօրենը,

			վարկային կազմակերպության ղեկավարի հետ փոխկապակցված իրավաբանական անձը,
			վարկային կազմակերպության բաժնետեր հանդիսացող ֆիզիկական անձը, որի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամում կազմում է 5 տոկոս և չունի օրենքով սահմանված այլ ձևով վարկային կազմակերպության որոշումները կանխորոշելու իրավունք,
			վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը:
	55	Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե	սպասարկվում են կամ ունեն հաշիվներ միևնույն առևտրային բանկում,
			նրանցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին,
			նրանցից մեկի գործադիր տնօրենը հանդիսանում է մյուսի՝ նման պարտականություններ կատարող անձ,
			բոլոր պատասխաններն էլ ճիշտ են:
	56	Նշել սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքների իմաստով ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե	միևնույն ընտանիքի անդամ են,
			աշխատում են վարկային կազմակերպության միևնույն ստորաբաժանումում,
			գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,
			վարում են ընդհանուր տնտեսություն:
	57	Նշեք սխալ տարբերակը. Վարկային կազմակերպության հետ կապված են համարվում վարկային կազմակերպության	կապիտալում մասնակցություն ունեցող անձինք,
			կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ համագործակցող անձինք,
			կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված անձինք,
			ղեկավարների հետ փոխկապակցված անձինք:
	58	Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել	ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5 տոկոսը,
			նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը,
			ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1 տոկոսը,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
	59	Նշեք սխալ պնդումը.	ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ՝ ԿԲ-ի վերստուգումներին խոչընդոտելու համար,

			ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվությունները ուշ ներկայացնելու համար,
			ԿԲ-ն կարող է սահմանել տուգանք վարկային կազմակերպության ղեկավարների նկատմամբ հաշվետվություններում անարժանահավատ տեղեկություններ արտացոլելու համար,
			վարկային կազմակերպության ղեկավարների վրա դրված տուգանքները գանձվում են նրանց անձնական միջոցներից հոգուտ ՀՀ ԿԲ-ի
	60	Վարկային կազմակերպության ղեկավարները գրկվում են որակավորման վկայականից.	Կենտրոնական բանկի որոշմամբ,
			վարկային կազմակերպության հիմնադիրների որոշմամբ,
			Կենտրոնական բանկի որոշմամբ՝ վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի պահանջով,
			նշված պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:
	61	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության ղեկավարները գրկվում են որակավորման վկայականից, եթե նրանք	ոչ միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը,
			չեն համապատասխանում ԿԲ-ի կողմից սահմանված որակավորման չափանիշներին,
			անազնիվ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ,
			անտեսել են ԿԲ-ի նախագուշացումը:
	62	ՀՀ ԿԲ-ի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը մերժելու հիմք չի կարող հանդիսանալ՝	կեղծ կամ անարժանահավատ տեղեկությունների ներկայացումը,
			ներկայացված փաստաթղթերի թերի, ոչ ամբողջական լինելը կամ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին հակասելը,
			դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպության կողմից հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկի խախտելը,
			տվյալ տարածքում այլ վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի առկայությունը:
	63	Նշեք սխալ պատասխանը. ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները գրանցման և լիցենզավորման համար ՀՀ ԿԲ են ներկայացնում՝	վարկային կազմակերպության գրանցման և լիցենզավորման դիմումը
			վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ վեց օրինակից
			վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք՝ կազմված ԿԲ-ի սահմանված ձևով.

			մասնաճյուղի գործունեության հաստատված կանոնակարգը՝ ԿԲ-ի սահմանած ձևով
64	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե		վարկային կազմակերպությունն իրականացնում է անհիմն ու վտանգավոր գործունեություն,
			վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը,
			դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը,
			վարկային կազմակերպության լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային կազմակերպությունը գործունեություն չի իրականացրել,
65	Նշեք սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած կարող է ճանաչվել, եթե		դրա գրանցման և լիցենզավորման ընթացքում ներկայացվել են կեղծ տեղեկություններ,
			վարկային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել ՀՀ Կենտրոնա-կան բանկի՝ խախտումները վերացնելու մասին հանձնարարականը,
			դադարել է վարկային կազմակերպության գործունեությունը,
			վարկային կազմակերպությունը գործունեություն է ծավալում բարձր ռիսկային ոլորտներում:
66	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում՝		Կենտրոնական բանկի լիցենզավորման հանձնաժողովի որոշմամբ,
			Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ,
			Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
67	Նշեք ամբողջական տարբերակը. Նշվածներից (որը) որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ. (ա) վարկային կազմակերպությունները, (բ) վարկային կազմակերպության մասնաճյուղերը, (գ) վարկային կազմակերպության ներկայացուցիչությունները:		միայն (ա) և (բ),
			միայն (բ) և (գ),
			միայն (ա) և (գ),
			(ա) և (բ) և (գ):
68	Վարկային կազմակերպության ներկայացուցչությունը		ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել որոշ ֆինանսական գործառնություններ,

			ներկայացնում է վարկային կազմակերպությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, վարկային կազմակերպության անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ,
			վարկային կազմակերպության կողմից տրված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել ֆինանսական գործառնություններ,
			ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել բոլոր ֆինանսական գործառնությունները:
	69	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, պահանջվում է ԿԲ նախնական համաձայնությունը.	վարկային կազմակերպության կողմից իր բաժնետոմսերը գրավ ընդունելով՝ վարկեր տրամադրելիս, փաստացի համարված կանոնադրական հիմնադրամը նվազեցնելիս, վարկային կազմակերպության ՀՀ տարածքում մասնաճյուղ կամ ներկայացություն բացելիս բոլոր պատասխանները սխալ են:
	70	Վարկային կազմակերպության հիմնական կապիտալը վարկային կազմակերպության	կանոնադրական հիմնադրամի և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է, ընդհանուր և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է, ընդհանուր և լրացուցիչ կապիտալների տարբերությունն է, պարտավորությունների և ակտիվների տարբերությունն է:
	71	Վարկային կազմակերպության լրացուցիչ կապիտալը վարկային կազմակերպության	ընդհանուր և հիմնական կապիտալների հանրագումարն է, հիմնական կապիտալի և կանոնադրական հիմնադրամի տարբերությունն է, ընդհանուր և հիմնական կապիտալների տարբերությունն է և ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է:
	72	Վարկային կազմակերպության կապիտալի համարժեքության նորմատիվը	ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, կանոնադրական հիմնադրամի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, լրացուցիչ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է, հիմնական կապիտալի և բարձր իրացվելի ակտիվների միջև սահմանային հարաբերակցությունն է:
	73	Նշված օրենսդրության խախտումներից որի դեպքում վարկային կազմակերպության նկատմամբ նշանակված տուգանքի չափը մաքսիմալ է՝	կապիտալի համարժեքության նորմատիվի խախտման դեպքում, ԿԲ ներկայացվող հաշվետվություններում անարժանահավատ տեղեկատվություն արտացոլելու դեպքում, ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում, չհիմնավորված ռիսկային գործունեություն վարելու դեպքում:

		Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար, ԿԲ ներկայացվող հաշվետվությունները ուշացնելու համար վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել՝	ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը, նվազագույն աշխատավարձի 100 պատիկը, նվազագույն աշխատավարձի 1000 պատիկը, նվազագույն աշխատավարձի 2000 պատիկը,
		74	
		Նշված ո՞ր դեպքերում վարկային կազմակերպությունների ղեկավարների նկատմամբ կարող է նշանակվել տուգանք.	արտարժույթի տնօրինման նորմատիվի խախտման դեպքում, ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում, վարկային կազմակերպության կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում վարկային գործունեություն չիրականացնելու դեպքում, նշված բոլոր դեպքերում էլ վարկային կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների) նկատմամբ կարող է նշանակվել տուգանք:
		75	
		76	Նշված անձանցից որի՞ն ԿԲ-ն չի կարող տուգանել
			վարկային կազմակերպության գործադիր տնօրենին, վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահին, վարկային կազմակերպության մարքեթինգային ղեկավարամենտի ղեկավարին նշվածներից յուրաքանչյուրին ԿԲ-ն իրավասու է
		77	Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվեն անվճարունակ, եթե վարկային կազմակերպությունը
			ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է կապիտալի համարժեքության նորմատիվները, նախորդ երեք տարվա ընթացքում շահաբաժիններ չի բաշխել, ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, ճիշտ պատասխանը նշված չէ:
		78	Վարկային կազմակերպությունը կարող է ճանաչվել անվճարունակ, եթե. ա) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, բ) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին, գ) ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը,
			միայն գ) տարբերակը միայն ա) և բ) տարբերակները միայն ա) և գ) տարբերակները նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	<p>Նշել ճիշտ պատասխանը.</p> <p>«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է.</p> <p>(ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար,</p> <p>(բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան,</p> <p>(գ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր,</p> <p>(դ) վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչել,</p>	<p>միայն (ա) կամ (գ)</p> <p>միայն (ա) կամ (բ)</p> <p>միայն (բ) և (գ)</p> <p>միայն (ա) և (դ)</p>
79	<p>Նշել ճիշտ տարբերակը.</p> <p>Վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով ԿԲ-ը դատարան է դիմում, եթե</p> <p>(ա) առկա են վարկային կազմակերպությունն անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը,</p> <p>(բ) վարկային կազմակերպությունը՝ ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում, ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները,</p> <p>(գ) ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարվելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս,</p>	<p>միայն (ա) և (բ),</p> <p>միայն (բ) և (գ),</p> <p>միայն (գ),</p> <p>միայն (ա) և/կամ (գ):</p>
80	<p>Վարկային կազմակերպությունում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակում է</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկը,</p> <p>ՀՀ ԿԲ ներկայացմամբ՝ դատարանը,</p> <p>ՀՀ արդարադատության նախարարությունը,</p> <p>վարկային կազմակերպության ներկայացմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը:</p>
81	<p>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.</p>	<p>ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին և անդամներին նշանակում է Կենտրոնական բանկը</p> <p>ադմինիստրացիայի գործունեության ընթացքում բանկի կառավարման որոշ մարմինների լիազորություններ անցնում են ադմինիստրացիայի ղեկավարին</p>
82		

			ադմինիստրացիան բանկի կառավարման հատուկ մարմին է, որի ղեկավարին նշանակում է Կենտրոնական բանկը, իսկ անդամներին՝ տվյալ բանկի կառավարման մարմինները
			ճիշտ պատասխանը նշված չէ
	83	Բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակում է համարվում նման տեղեկատվության տրամադրումը	բանկերին, ՀՀ բանկերի միությանը, բանկին ատոլիտորական ծառայություն մատուցող ատոլիտորական ընկերությանը, վարկային կազմակերպությանը:
	84	Նշել ամբողջական պատասխանը. Ո՞ր դեպքերում է առկա բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում՝ (ա) վարկային կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակումը, (բ) ԿԲ կողմից խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների հրապարակումը, (գ) ՀՀ Բանկերի միության կողմից բանկերի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների հրապարակումը,	միայն (ա), միայն (բ), միայն (գ), (ա) և (գ):
	85	Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս`	ներկայացրել են ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը, ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր, ներկայացրել են ՀՀ արդարադատության մասնաճյուղի համապատասխան որոշումը տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ, բոլոր պատասխանները ճիշտ են:
	86	Բանկերը կարող են իրենց հաճախորդների մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները միմյանց տրամադրել`	ինքնուրույնաբար, առանց որևէ համաձայնության, ինքնուրույնաբար իսկ վարկային կազմակերպություններին՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ, միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ, միայն դատարանի որոշմամբ:
	87	Ստորև նշվածներից ո՞ր պնդումն է սխալ.	վարկը կարող է տրամադրել միայն բանկը կամ վարկային կազմակերպությունը, իսկ փոխառություն՝ ցանկացած

			փոխառությունը կարող է տրամադրվել թե տոկոսով, թե առանց տոկոս, վարկը կարող է տրամադրվել միայն տոկոսով,
			վարկային պայմանագիրը կնքվում է միայն գրավոր, իսկ փոխառության պայմանագիրը՝ թե՛ գրավոր և թե՛ բանավոր ձևով,
			փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրան կամ այլ գույք հանձնելու պահից:
	88	Վարկեր կարող են տալ	միայն բանկերը,
			միայն վարկային կազմակերպությունները,
			միայն բանկերը և վարկային կազմակերպությունները,
			ցանկացած անձ կամ կազմակերպություն:
	89	Նշել ամբողջական պատասխանը. Գույքի սեփականության իրավունքը ենթադրում է գույքը (ա) տիրապետելու իրավունք, (բ) օգտագործելու իրավունք, (գ) տնօրինելու իրավունք:	միայն (ա)
			միայն (գ),
			միայն (ա) և (գ)
			(ա) և (բ) և (գ):
	90	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, հաշվետվություն տրամադրող անձը գործարքը կամ գործարար հարաբերությունը պետք է որակի որպես կասկածելի, եթե	բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով
			բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը օգտագործվել է ահաբեկչության նպատակով
			բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքի հետ կապված առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով
			նշված բոլոր պատասխանների ճիշտ են
	91	Ֆինանսական հաստատությունն ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում	իրավունք ունի մինչև 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվություն
			իրավունք ունի ցանկացած ժամկետով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն
			պարտավոր է 10 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը

			պարտավոր է 10 օրվա ընթացքում լիազոր մարմիններ կայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն
	92	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի՝	գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի 5 օրվա ընթացքում՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն ֆինանսական հաստատությանը
			գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն լիազոր մարմնին
	93	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական միջոցների դադարեցում է համարվում	կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը
			ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող և (կամ) նրանց կողմից վերահսկվող ֆինանսական միջոցների փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	94	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ոչ ռեզիդենտ	Ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրա-պետությունում 183 օր և ավելի,
			ՀՀ-ում պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը,
			միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչությունները,
			ճիշտ պատասխան նշված չէ:
	95	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ոչ ռեզիդենտ	օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները,

			օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատակիցները,
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները,
			բոլոր պատասխանները ճիշտ են:
	96	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ռեզիդենտ	օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները,
			օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը,
			ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը,
			ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները:
	97	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործարքներ չեն համարվում՝	կարճաժամկետ վարկերի տրամադրումը, փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը, օտարերկրյա ուղղակի ներդրումները, բոլոր պատասխանները ճիշտ են:
	98	Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ: Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործառնությունների գծով վճարումները՝	ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ծառայությունների ներմուծման կամ արտահանման հետ կապված վճարումներն են, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կարճաժամկետ վարկերի տրամադրումն է, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև փոխառությունների դիմաց վճարվող տոկոսներն են, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կապիտալի փոխանցումներն են:
	99	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային հաշվի գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև (ա) օտարերկրյա կարճաժամկետ պորտֆելային ներդրումները, (բ) երկարաժամկետ վարկերի տրամադրումը, (գ) փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները.	միայն (ա), միայն (բ), միայն (գ), (ա) և (գ):
	100	Ընթացիկ արժութային գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև.	օտարերկրյա պորտֆելային ներդրումները, օտարերկրյա ուղղակի ներդրումները,

			երկարաժամկետ վարկերի տրամադրումը, ոչ առևտրային բնույթի փոխանցումները:
101	Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել որպես.		սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, առևտրային կամ ոչ առևտրային կոոպերատիվ միայն առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ բաժնետիրական ընկերություն, առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվ ճիշտ պատասխանը նշված չէ
102	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, խնայողական միություններ կարող են ստեղծվել բացառապես որպես.		սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ բաժնետիրական ընկերություն բաժնետիրական ընկերություն և կոոպերատիվ կոոպերատիվ
103	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունների տիպեր չեն համարվում.		ֆակտորինգային միություններ խնայողական միություններ վարկային միություններ լիզինգային կազմակերպությունները
104	Նշել սխալ պատասխանը. Վարկային կազմակերպության պետական գրանցման և լիցենզավորման համար նրա հիմնադիրները ԿԲ են ներկայացնում.		գրանցման և լիցենզավորման դիմում վարկային կազմակերպության կանոնադրությունը՝ 3 օրինակից վարկային կազմակերպության ղեկավարների գործունեության մասին տեղեկանք պետական տուրքի վճարման անդորրագիրը
105	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը համարվում է.		ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ՀՀ դրամով և արտարժույթային առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ցանկացած արժույթով ճիշտ պատասխանը նշված չէ
106	Վարկային կազմակերպության լիցենզիան.		կարող է գրավադրվել միայն ԿԲ-ում կարող է գրավադրվել այլ վարկային կազմակերպություններում՝ ԿԲ-ի նախնական համաձայնությամբ չի կարող գրավադրվել բոլոր պատասխանները սխալ են
107	Օտարերկրյա պետություններում հայկական վարկային կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցիչները ստեղծվում		ՀՀ օրենսդրությանը համապատասխան ՄԱԿ-ի դիրեկտիվներին համապատասխան տվյալ պետության օրենսդրությանը և (կամ) ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան

			ՀՀ արդարադատության նախարարության նորմատիվ ակտերին համապատասխան
108	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղի գրանցման դիմումը բավարարում կամ մերժում է.		ԿԲ նախագահը ԿԲ խորհուրդը ԿԲ լիցենզավորման հանձնաժողովի նախագահը ԿԲ գլխավոր վերստուգիչը
109	Վարկային կազմակերպությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր ներկայացուցչության գործունեությունը՝		դադարեցման նախորդ օրը ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին դադարեցումից մեկ շաբաթ առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին դադարեցումից 15 օր առաջ ԿԲ-ին տեղեկացնելով դադարեցման և դրա ժամկետի մասին ճիշտ պատասխանը նշված չէ
110	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել.		բացառապես ձեռնարկատիրական վարկեր բացառապես սպառողական վարկեր բացառապես ձեռնարկատիրական վարկեր կամ փոխառություններ, իսկ սպառողական վարկերը կամ փոխառությունները՝ ԿԲ սահմանած կարգով և պայմաններով ձեռնարկատիրական և սպառողական վարկեր և փոխառություններ
111	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական միջոցների դադարեցում է համարվում		կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացումը գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումը ճիշտ պատասխանը նշված չէ
112	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավարներ են.		վարկային կազմակերպության խորհրդի նախագահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի կառավարիչը վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վարկային կազմակերպության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը վարկային կազմակերպության վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները բոլոր պատասխանները ճիշտ են

	113	Վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման կարգը սահմանում է.	ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ԿԲ-ը՝ ՀՀ վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ համատեղ ՀՀ կենտրոնական բանկը, Հայաստանի բանկերի միությունը
	114	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները պարտավոր են ԿԲ-ի գրանցմանը ներկայացնել հետևյալ փոփոխությունները. (ա) վարկային կազմակերպության կանոնադրությունում կատարված փոփոխությունները (բ) վարկային կազմակերպության ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները (գ) վարկային կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները	միայն (ա) և (բ), միայն (ա) և (գ) միայն (բ) և (գ) (ա), (բ) և (գ)
	115	Վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է.	Կենտրոնական բանկը՝ Վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեի հետ Կենտրոնական բանկը
			Կենտրոնական բանկը՝ ֆինանսների նախարարության հետ համատեղ
			Կենտրոնական բանկը՝ արդարադատության նախարարության հետ համատեղ
	116	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.	յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունն ստուգվում է աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտային կազմակերպության կողմից անկախ աուդիտային կազմակերպությանը նշանակում է վարկային կազմակերպությունը
			վարկային կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը
			նշված բոլոր պանդումներն էլ ճիշտ են
	117	Նշել ճիշտ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	վարկային կազմակերպությունը կարող է տրամադրել ձեռնարկատիրական և սպառողական վարկեր կամ փոխառություններ
			վարկային կազմակերպությունը լիցենզիայի հիման վրա կարող է գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ

			վարկային կազմակերպություններին (բացառությամբ սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունների) արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	118	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները պարտավոր են առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով հրապարակել հետևյալ տեղեկությունները.	վարկային կազմակերպության ղեկավարների ցուցակը և դրանում կատարվող յուրաքանչյուր փոփոխություն
			իրենց կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքներ
			իրենց կողմից տրամադրվող վարկերի ժամկետայնություն
			ծառայությունների միջնորդավճարներ
	119	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունը անկախ առողիտային կազմակերպության եզրակացությունը կենտրոնական բանկ է ներկայացնում	յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը
			յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 15-ը
			ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ճամկետում
			ճիշտ պատասխանը նշված չէ
	120	Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից չէ.	տուգանք
			նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական
			վարկային կազմակերպության գույքի բռնագրավում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	121	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում.	որոշման ընդունման պահից
			որոշման ընդունման պահից 15 օր հետո
			զանգվածային լրատվության միջոցներով
			հրապարակվելու պահից
			ՀՀ պետական ռեգիստրից վարկային կազմակերպությանը գրանցումից հանելու պահից
	122	Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակն է.	ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			բոլոր պնդումները սխալ են

			ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			բոլոր նշվածները հանդիսանում են ԿԲ նպատակներ
	123	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկի նպատակ.	ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը
			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովմանը
			ՀՀ դրամի փոխարժեքի կայունացմանը
			ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգի զարգացմանը
	124	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ԿԲ-ն առաջնությունը տալիս է	գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը
			շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձեռնարկումը ու պահպանումը
			դրամաշրջանառության կազմակերպումը եւ հարկաբյուջետային քաղաքականության մշակումը
	125	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ չի հանդիսանում	արտարժույթի առք ու վաճառքի միջին փոխարժեքի ձևավորումը
			ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը
			բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը
			Հայաստանի Հանրապետության ներկայացումը միջազգային ֆինանսական կազմակերպություններում
	126	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է.	ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը
			փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը
			գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծումն ու զարգացումը
			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
	127	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ է (են) հանդիսանում.	ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը
			ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը
			փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը
	128	Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկի նպատակ է (են) հանդիսանում.	ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը
			ֆինանսական համակարգում ազատ և բարեխիղճ տնտեսական մրցակցության ապահովումը
			փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը

			նշված բոլոր պատասխանները ճիշտ են
129	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության անվճարունակությունը ճանաչվում է.		վարկային կազմակերպության խորհրդի որոշմամբ, կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի որոշմամբ
130	Նշել ամբողջական պատասխանը. Վարկային կազմակերպությունում անվճարունակության հիմքերից մեկի բացահայտման դեպքում կենտրոնական բանկը կարող է. (ա) նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար (բ) ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան (գ) դատարանից պահանջել ուժը կորցրած ճանաչել վարկային կազմակերպության լիցենզիան		միայն (ա) միայն (ա) կամ (գ) միայն (ա) կամ (բ) (ա) կամ (բ) կամ (գ)
131	Նշել ամբողջական պատասխանը. Վարկային կազմակերպությունը համարվում է անվճարունակ, եթե. (ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին (բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները (գ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված նորմատիվները		միայն (ա) և (բ), միայն (ա) և (գ) (ա) և (բ) և (գ) ճիշտ պատասխանը նշված չէ
132	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկությունը.		դատարանի վճռի հիման վրա կենտրոնական բանկի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է
133	Ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում կատարվող փոփոխությունները և լրացումները հաստատում է.		վարկային կազմակերպության խորհուրդը ադմինիստրացիայի ղեկավարը կենտրոնական բանկը վարկային կազմակերպությունների ազգային կոմիտեն
134	Նշել ճիշտ պնդումը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի.		ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանում է վարկային կազմակերպության խորհուրդը

			ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման ծրագրով
			ադմինիստրացիայի գործունեության համար ժամկետ չի սահմանվում
			ադմինիստրացիայի գործունեության ժամկետը որոշվում է ադմինիստրացիայի ղեկավարի կողմից
	135	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկի համաձայնությամբ ադմինիստրացիայի ղեկավարը կարող է վարկային կազմակերպության առանձին ոլորտների կառավարման լիազորությունները վերապահել.	վարկային կազմակերպության աշխատակիցներին կենտրոնական բանկի աշխատակիցներին ադմինիստրացիայի անդամներին բոլոր պատասխանները ճիշտ են
	136	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը.	իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն միջոցներ է ձեռնարկում վարկային կազմակերպության գույքի պահպանության ուղղությամբ պարզում է վարկային կազմակերպության պարտատերերին, նրանց պահանջների չափը վարկային կազմակերպության կառավարման մարմիններից վարկային կազմակերպության գործունեության վերաբերյալ ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր
	137	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարը. (ա) կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական առողջացման ծրագիրը, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ (բ) իրականացնում է վարկային կազմակերպության կառավարման մարմինների լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն (գ) վարկային կազմակերպության անունից հայցով դիմում է դատարան և արբիտրաժային տրիբունալ	միայն (ա) միայն (բ) միայն (ա) և (գ) (ա), (բ) և (գ)

	138	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի.	վարկային կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատականը վարկային կազմակերպության պահպանության ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումները վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխության ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները բոլոր պատասխանները ճիշտ են
	139	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության առողջացման միջոցառումների ծրագիրը պարտադիր կարգով պետք է պարունակի. (ա) վարկային կազմակերպության աշխատակիցների վերապատրաստման ֆինանսական ծրագիրը (բ) լրացուցիչ եկամուտների ստացմանն ուղղված միջոցառումները (գ) վարկային կազմակերպության մասնակիցների մասնակցության եղանակները վարկային կազմակերպության ֆինանսական առողջացմանը	միայն (ա) միայն (բ) միայն (բ) և (գ) (ա), (բ) և (գ)
	140	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ֆինանսական առողջացման միջոցառումների ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է.	ժամանակավոր աղմինիստրացիայի ղեկավարը վարկային կազմակերպության խորհուրդը կենտրոնական բանկը բոլոր պատասխանները սխալ են
	141	Կենտրոնական բանկը անվճարունակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել.	հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկման այլ կարգ հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերի այլ կազմ բոլոր պատասխանները ճիշտ են

	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը անվճարումակ վարկային կազմակերպության համար կարող է սահմանել. (ա) հիմնական և հատուկ նորմատիվների հաշվարկման այլ կարգ (բ) այլ հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվներ (գ) հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվների այլ սահմանաչափեր	միայն (ա) միայն (գ), միայն (ա) և (գ) (ա), (բ) և (գ)
142	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնակիցների և այլ անձանց ֆինանսական օգնությունը կամ լրացուցիչ ներդրումները կարող են իրականացվել հետևյալ ձևերով.	վարկային կազմակերպությունում ավանդի ներդրում վարկային կազմակերպությունում դեպոզիտի ներդրում վարկերի, փոխառությունների տրամադրում բոլոր պատասխանները ճիշտ են
144	Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	վարկային պորտֆելի որակի բարելավում շահույթ չբերող ակտիվների վաճառք այն ակտիվների վաճառք, որոնց օտարումը չի խոչընդոտում վարկային կազմակերպության կողմից իր գործառնությունների պատշաճ իրականացմանը նշված բոլոր պատասխանները ճիշտ են
145	Վարկային կազմակերպության պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	վարկային պորտֆելի որակի բարելավում ընդհանուր և (կամ) կանոնադրական կապիտալի չափի մեծացում վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում՝ պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում բոլոր պատասխանները ճիշտ են
146	Վարկային կազմակերպության ակտիվների կառուցվածքի փոփոխությունը կարող է նախատեսել.	ընդհանուր կապիտալի չափի մեծացում վարկային կազմակերպության ծախսերի, այդ թվում՝ պարտքերի սպասարկման և նրա կառավարման գծով իրականացվող ծախսերի կրճատում կանոնադրական կապիտալի չափի մեծացում ճիշտ պատասխանը նշված չէ

147	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը կարող է իրականացվել հետևյալ միջոցներով	վարկային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի և կազմի փոփոխություն տարածքային ստորաբաժանումների լուծարում կառուցվածքային ստորաբաժանումների լուծարում բոլոր պատասխանները ճիշտ են
148	Վարկային կազմակերպության նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է.	վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից կենտրոնական բանկի կողմից՝ նրա խորհրդի որոշմամբ դատարանի կողմից վարկային կազմակերպության խոշոր պարտատերերի կողմից
149	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի,	Վարկային կազմակերպության սնանկության մասին գործերը քննվում են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի կողմից վարկային կազմակերպության սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ վարկային կազմակերպության սնանկության վարույթի ընթացքում հաշտության համաձայնություն չի կարող կնքվել վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձինք են պարտապան վարկային կազմակերպությունը, կենտրոնական բանկը և լուծարային կառավարիչը
150	Վարկային կազմակերպության սնանկության գործով դատավարությունում գործին մասնակցող անձ (անձինք) չէ (չեն).	պարտապան վարկային կազմակերպությունը պարտապան վարկային կազմակերպության խոշոր պարտատերերը լուծարային կառավարիչը ՀՀ կենտրոնական բանկը
151	Նշել սխալ պնդումը. Դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից.	լուծարային կառավարիչն են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները սառեցվում են բանկի բոլոր հաշիվները՝ բացառությամբ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվների դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դիմաց տոկոսների հաշվարկումը և գանձումը դատարաններում կարճվում են բոլոր այն գործերի վարույթները, որտեղ բանկը ճանաչվել է պատասխանող

152	Լուծարային կառավարչի դիմումի հիման վրա պետական լիազորված մարմինը լուծարվող վարկային կազմակերպության ֆիրմային անվանման մեջ կատարվում է փոփոխություն՝ ներառելով հետևյալ բառերը.	լուծարված վարկային կազմակերպություն սնանկ վարկային կազմակերպություն լուծարվող վարկային կազմակերպություն բոլոր պատասխանները սխալ են
153	Լուծարային կառավարչի կողմից հրապարակված՝ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը պետք է լինի.	մինչև երկու ամիս երկուսից մինչև վեց ամիս վեց ամսից մինչև մեկ տարի ճիշտ պատասխանը նշված չէ
154	Լուծարային կառավարիչը, կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հրապարակում մամուլում.	ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ ամիսը երկու և ավելի անգամ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ
155	Նշել սխալ պատասխանը. Կենտրոնական բանկը կարող է լուծարային կառավարչի նկատմամբ կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները.	նախազգուշացում և թույլ տված խախտումը վերացնելու հանձնարարական դրակավորման վկայականի ուժը կորցրած ճանաչում տուգանք ճիշտ պատասխանը նշված չէ
156	Նշել սխալ պատասխանը. Լուծարային կառավարչի գործողությունները կարող են բողոքարկվել դատարանում.	վարկային կազմակերպության խորհրդի նախագահի կողմից վարկային կազմակերպության պարտատերերի կողմից վարկային կազմակերպության պարտապանների կողմից կենտրոնական բանկի կողմից
157	Վարկային կազմակերպությունում նշանակված ադմինիստրացիայի գործունեության հետ կապված ծախսերն իրականացվում են.	ՀՀ կենտրոնական բանկի հաշվին ՀՀ պետական բյուջեի հաշվին վարկային կազմակերպության հաշվին լուծարային միջոցների հաշվին
158	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ասպահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի անդամների և ղեկավարի վարձատրության չափը և այլ ծախսերը սահմանում է.	ադմինիստրացիայի ղեկավարը կենտրոնական բանկը դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ վարկային կազմակերպության խորհուրդը

159	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, լուծարային կառավարչի վարձատրության չափը սահմանում է.	վարկային կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովը կենտրոնական բանկը դատարանը՝ կենտրոնական բանկի ներկայացմամբ վարկային կազմակերպության խորհուրդը
160	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկերի սնանկության վերաբերյալ գործերը քննում է.	ՀՀ կենտրոնական բանկը ճիշտ պատասխանը նշված չէ տնտեսական դատարանը վարկային կազմակերպությունների միությունը և կենտրոնական բանկը
161	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիք են համարվում.	հաճախորդին սպասարկելու կապակցությամբ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները հաճախորդի հանձնարարությամբ կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները բոլոր պատասխանները ճիշտ են
162	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում.	բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով տարածելը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը երրորդ անձանց բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քննելը բոլոր պատասխանները ճիշտ են
163	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը մամուլով և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է բանկի հանդեպ անպարտաճանաչ պարտատերերի անունները հետևյալ պարբերականությամբ.	յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ
164	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկը մամուլով հրապարակում է բանկի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների մասին հետևյալ տեղեկատվությունը	ռեզիդենտության երկրները անվանումներն ու անունները պարտավորությունների միջին ամսական մեծությունը բոլոր պատասխանները ճիշտ են

	165	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, կենտրոնական բանկի կողմից հրապարակվող բանկերի հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների առումով, անպարտաճանաչ պարտապան է համարվում.	պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 90 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը
			պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 120 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը
			պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 180 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը
			պայմանագրով պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների 270 օր և ավելի խախտում թույլ տված պարտապանը
	166	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում.	վարկային կազմակերպությանը իրավաբանական ծառայություն մատուցող անձին տվյալ վարկային կազմակերպության կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հալստելը
			կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ վարկային կազմակերպությունների հանդեպ խոշոր պարտավորություններ ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումների ու անունների հրապարակելը մամուլով
			վարկային կազմակերպության ղեկավարի կողմից թույլ տված օրենքի խախտումների և դրանց համար ՀՀ ԿԲ կողմից վարկային կազմակերպության ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին որոշումների հրապարակումը ՀՀ ԿԲ կողմից
			բոլոր պատասխանները ճիշտ են
	167	Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպությունները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են.	վարկային կազմակերպության խորհրդի որոշման հիման վրա
			դատարանի որոշման հիման վրա
			կենտրոնական բանկի որոշման հիման վրա
			ճիշտ պատասխանը նշված չէ.
	168	"Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի համաձայն գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում է համարվում	կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացումը

			ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	169	Ընտրել ճիշտ տարբերակը. Ֆինանսական հաստատությունը անկախ գործարքի դիմաց վճարումը կանխիկ կամ անկանխիկ լինելու հանգամանքից, Լիազորված մարմին տեղեկություն է տրամադրում, եթե. (ա) գործարքի արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը, իսկ անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքների դեպքում՝ 40 միլիոն դրամը (բ) անկախ գործարքի գումարի չափից, գործարքի կողմը գրանցված է օֆշորային տարածքում կամ երկրում (գ) հաճախորդն ունի պարտավորություններ բանկային համակարգի նկատմամբ (դ) հաճախորդը նախկինում ունեցել է դատվածություն	ճիշտ պատասխանը նշված չէ
			միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ) և (գ)
			միայն (ա), (բ), (գ) և (դ)
	170	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է՝	հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից, ըստ հաշվետվություն տրամադրող յուրաքանչյուր անձի համար սահմանված գործարքների տեսակների, անկախ դրանցում ներգրավված գումարի չափից
			հաշվետվություն տրամադրող անձանց կողմից՝ ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի
			հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից՝ ըստ գործարքների սահմանաչափերի
			ճիշտ պատասխանը նշված չէ
	171	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը կայացնում է՝	հաշվետվություն տրամադրող անձը
			հաշվետվություն տրամադրող անձը կամ լիազոր մարմինը
			հաշվետվություն տրամադրող անձը՝ նախապես ստանալով լիազոր մարմնի համաձայնությունը
			լիազոր մարմինը
	172	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ իրավասու մարմինների կողմից լիցենզավորվող և վերահսկվող՝ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից տեղեկության տրամադրման կարգը, ժամկետները և ձևերը	ՀՀ կենտրոնական բանկը՝ նորմատիվ իրավական ակտերով
			համապատասխան իրավասու մարմինը, ով լիցենզավորում և վերահսկում է հաշվետվությունը
			ՀՀ կառավարությունը
			ՀՀ կենտրոնական բանկը՝ համապատասխան իրավասու մարմնի հետ համատեղ

	173	Ֆինանսական հաստատությունները Լիազորված մարմնին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվություն են տրամադրվում, ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի.	անկանխիկ գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն դրամը
			կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն դրամը, անկանխիկ գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը
			անկանխիկ գործարքներ, անկախ գումարի մեծությունից
			նշված բոլոր պնդումները ճիշտ են
	174	Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի՝ գործարքը կարող է համարվել կասկածելի	միայն այն դեպքում, երբ գործարքի պայմանները չեն համապատասխանում ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին
			միայն այն դեպքում, երբ հաշվետվություն տրամադրող անձի համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքն ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նյատյակ չի հետապնդում
			միայն այն դեպքում, երբ գործարքը գերազանցում է 20 միլիոն դրամը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	175	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաստատության կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն	հաշվետվություն տրամադրող անձի կողմից, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ
			լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ
			լիազոր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ ֆինանսական հաստատության միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ
			բոլոր պատասխանները ճիշտ են
	176	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնեն, եթե	հաստատվում են գործարար հարաբերություններ կամ կատարվում է միանգամյա գործարք.
			կասկածներ են առաջանում փողերի լվացման և (կամ) ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ
			կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության մասին
			բոլոր պատասխանները ճիշտ են

	Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժուքային արժեքներ համարվող գույքի տեսակներն են. (ա) ԱՄՆ դոլարը (բ) եվրոն 177 (գ) ռուսական ռուբլին	միայն (ա) միայն (բ) միայն (ա) և (բ) (ա), (բ) և (գ)
	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժուքային արժեքներ համարվող գույքի տեսակներն են. 178	ՀՀ դրամը ՀՀ դրամով արտահայտված վճարային արժեքները բանկային ոսկին ճիշտ պատասխանը նշված չէ
	Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ընթացիկ արժուքային գործարքների ծավալը չի կարող գերազանցել. 179	400 000 ՀՀ դրամը 500 000 ՀՀ դրամը 500 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը բոլոր պատասխանները սխալ են
	Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ում ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման դրամական գնանշումը իրականացվում է. 180	բացառապես ՀՀ դրամով ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի ցանկացած արժույթով
	Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում դրամական շահումները կարող են գրվագրվել և տրվել. 181	բացառապես ՀՀ դրամով ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի ցանկացած արժույթով
	Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքում սպառողական փոխառությունները տրամադրվում են. 182	ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի ՀՀ դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով բացառապես ՀՀ դրամով ցանկացած արժույթով
	Համաձայն «Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արտարժույթով կարող են իրականացվել. 183	ՀՀ-ում աշխատանքների կատարման դրամական գնանշումը ռեզիդենտների միջև նվիրատվության գործարքները

			ներդրումները ՀՀ տարածքում իրավաբանական անձանց բաժնեհավաք կապիտալում
			բոլոր պատասխանները ճիշտ են
	184	Համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, արժույթային օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում.	յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում, եթե թույլ է տրվել տարբեր անձանց հետ իրականացվող գործարքներում յուրաքանչյուր խախտում համարվում է մեկ խախտում, եթե այդպիսին է ճանաչվել կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով բոլոր խախտումները համարվում են մեկ խախտում
	185	Նշել ամբողջական պատասխանը. Ներքոհիշյալ անձանցից որո՞նք են համարվում վարկային կազմակերպության հետ կապված անձ. (ա) վարկային կազմակերպության գործադիր տնօրենը (բ) վարկային կազմակերպության գործադիր տնօրենի հետ փոխկապակցված իրավաբանական անձը (գ) վարկային կազմակերպության հետ փոխկապակցված ֆիզիկական անձը	միայն (ա) և (գ) միայն (բ) և (գ) միայն (բ) (ա), (բ) և (գ)
	186	Վարկային կազմակերպությունները տարեկան աուդիտն իրականացնող կազմակերպությունը.	նշանակվում է վարկային կազմակերպության կողմից` ՀՀ ԿԲ սահմանաձև կարգով նշանակվում է վարկային կազմակերպության կողմից` ՀՀ ֆինանսների նախարարության սահմանաձև կարգով նշանակվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից բոլոր պատասխանները սխալ են
	187	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության ղեկավար չեն համարվում.	վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահը վարկային կազմակերպության վարչության անդամները վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցները վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամները
	188	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշված գործառնություններից որո՞նք չեն կարող իրականացնել վարկային կազմակերպությունը.	մատուցել ֆինանսական խորհրդատվություն ապահովագրական գործունեություն

			մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ
			ներգրավել փոխառություններ և/կամ կնքել նմանատիպ գործարքներ
	189	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվային ավելի մեղմ ռեժիմ, քան բանկերի նկատմամբ
			վարկային կազմակերպության համար սահմանվում է նորմատիվների նույն ռեժիմը, ինչպիսին բանկերինն է
			ԿԲ-ի խորհրդի որոշմամբ կարող է բանկերից ավելի խիստ նորմատիվային ռեժիմ սահմանվել
			ճիշտ պատասխանը նշված չէ
	190	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի,	ՀՀ կառավարությունը, Ազգային Ժողովի թույլտվությամբ, կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել
			ՀՀ կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության նկատմամբ որոշակի սահմանափակումներ սահմանել
			ՀՀ ԿԲ-ը կարող է վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման սահմանափակում նշանակել
			ճիշտ պատասխանը նշված չէ
	191	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, Կենտրոնական բանկը չի մերժում նշանակալից մասնակցության դիմումը, եթե.	անձն օրինական ուժի մեջ մտած դատավճռով գրկվել է ֆինանսական, բանկային, տնտեսական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
			անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար ունի դատվածություն
			տվյալ գործարքն ուղղված է, հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	192	Նշել սխալ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության տիպեր են համարվում.	վարկային միությունները,
			խնայողական միությունները
			ունիվերսալ վարկային կազմակերպությունները
			վճարահաշվարկային վարկային կազմակերպությունները
	193	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն չի համարվում այն մասնակցությունը, որով.	վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 5 տոկոս

			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 15 տոկոս
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 25 տոկոս
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում տվյալ մասնակցի մասնակցությունը կազմում է 35 տոկոս
	194	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար ՀՀ ԿԲ ներկայացվող փաստաթղթերը կենտրոնական բանկը քննում է.	փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից մեկամսյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասօրյա ժամկետում
			փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում
	195	Վարկային կազմակերպության լիցենզիան կարող է գրավադրվել.	միայն ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ
			վարկային կազմակերպության մասնակիցների ժողովի համաձայնությամբ և ՀՀ ԿԲ թույլտվությամբ
			ՀՀ ԿԲ թույլտվությամբ
			վարկային կազմակերպության լիցենզիան գրավադրման ենթակա չէ
	196	Նշել ամբողջական պատասխանը. Կենտրոնական բանկը գրանցում և լիցենզավորում է վարկային կազմակերպությունը, եթե պահպանվել են հետևյալ պահանջները. (ա) ամբողջությամբ վճարվել է վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը (բ) վարկային կազմակերպության վայրը ամբողջությամբ համապատասխանում է տեխնիկական հագեցվածության պահանջներին (գ) վարկային կազմակերպության ղեկավարները համապատասխանում են ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին (դ) վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձինք ստացել են ԿԲ համաձայնությունը (ե) առկա է ՀՀ Կառավարության թույլտվությունը	միայն (ա) և (բ)
			միայն (ա), (բ), (գ) և (դ)
			(ա), (բ), (գ), (դ) և (ե)
			միայն (ա), (գ), (դ) և (ե)
	197	Նշել սխալ տարբերակը. Կենտրոնական բանկը մերժում է մասնաճյուղի կամ ներկայացուցչության գրանցման դիմումը, եթե.	ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ

			մասնաճյուղի ղեկավարները չեն համապատասխանում ԿԲ-ի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին
			ներկայացված փաստաթղթերը թերի են, ամբողջական չեն կամ հակասում են ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին
			դիմումի տրման պահին, ինչպես նաև դիմումի քննարկման ժամանակահատվածի ընթացքում վարկային կազմակերպությունը խախտել է ԿԲ սահմանած հիմնական տնտեսական նորմատիվներից թեկուզ մեկը
	198	Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե.	տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին
			նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տիրապետող ֆիզիկական անձն իրավունք ունի անուղղակի կերպով տիրապետել մյուս անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին
			նրանցից մեկի կառավարման մարմնի անդամների թվի մեկ երրորդը տիրապետում է մյուս իրավաբանական անձի բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին
			բոլոր տարբերակներով էլ իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված
	199	Նշել ամբողջական պատասխանը. Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը գրանցումից հանվում է հետևյալ դեպքերում. (ա) վարկային կազմակերպության դիմումի հիման վրա (բ) մասնաճյուղի ղեկավարների դիմումի հիման վրա (գ) վարկային կազմակերպության լուծարման դեպքում (դ) հաճախորդների բողոքների հիման վրա	միայն (ա) միայն (ա), (բ) և (գ) միայն (ա) և (գ) (ա), (բ), (գ) և (դ)
	200	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է ՀՀ կառավարությունը վարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է կենտրոնական բանկը՝ ՀՀ կառավարության յուրաքանչյուր մարմնի հետ համատեղ ճիշտ պատասխանը նշված չէ
	201	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ձեռնարկատիրական վարկի կամ փոխառության տրամադրում է համարվում այն գործարքի կնքումը.	որով պարտապանը իրավաբանական կամ ֆիզիկական անձ է

			որով ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը գործարքով ստացված միջոցները օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
			որով պարտապանը իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
			որով պարտապանը իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է և գործարքով ստացված միջոցներն օգտագործելու է բացառապես իր կողմից իրականացվող կամ իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության համար
	202	Վարկային կազմակերպությունը սպառողական վարկեր կամ փոխառություններ կարող է տրամադրել.	բացառապես ԿԲ-ի սահմանած կարգով
			բացառապես ԿԲ-ի և ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանած կարգով
			բացառապես ԿԲ-ի նախնական համաձայնությամբ
			ճիշտ պատասխանը նշված չէ
	203	Կենտրոնական բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների ռեժիմը մեղմացնելու դեպքում պ.ո. նորմատիվներն ուժի մեջ են մտնում	կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ն ավելի ուշ ժամկետ չի սահմանել
			կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից, եթե ԿԲ-ը ՀՀ կառավարության հետ համատեղ ավելի ուշ ժամկետ չեն սահմանել
			կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո
			ճիշտ պատասխանը նշված չէ
	204	Նշել սխալ տարբերակը. Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկը վարկային կազմակերպության նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցներից մեկը.	վարկային կազմակերպության ղեկավարի որակավորման վկայականից զրկում
			լիցենզիայի ուժը կորցրած ժանաչում
			տույժի կիրառում
			տուգանքի կիրառում
	205	Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկը, որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց, կարող է տուգանել.	վարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարին կամ գլխավոր հաշվապահին
			վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարին
			վարկային կազմակերպության նշանակալից մասնակցություն ունեցող անձին
			վարկային կազմակերպության խորհրդի նախագահին

		Օրենսդրության խախտման դեպքում կենտրոնական բանկի կողմից գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ որպես լրացուցիչ պատասխանատվության միջոց կիրառվող տուգանքը չի կարող գերազանցել.	հարյուր հազար դրամը մեկ միլիոն դրամը երկու միլիոն դրամը հինգ հարյուր հազար դրամը
	207	Վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին ԿԲ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում.	զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից մեկ ամսվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում արդարադատության նախարարությունում գրանցվելու պահից
	208	Նշել ճիշտ տարբերակը. Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է կենտրոնական բանկը յուրաքանչյուր տարի վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային յուրաքանչյուր եռամսյակ վարկային կազմակերպության գործունեությունը պետք է ստուգվի անկախ աուդիտի կողմից, որին նշանակում է վարկային ճիշտ պատասխանը նշված չէ
	209	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի.	տուգանքը գանձվում է ԿԲ նախագահի որոշմամբ տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ բացառապես դատարանի որոշմամբ տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ ՀՀ բանկերի միության որոշմամբ տուգանքը գանձվում է ԿԲ հայցով՝ դատարանի որոշմամբ, եթե վարկային կազմակերպությունը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ չափի հետ
	210	Իր նպատակներն իրագործելու համար Կենտրոնական բանկն իրականացնում է.	կառավարության բանկային սպասարկումը հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները նշված բոլոր պատասխանները ճիշտ են

	<p>Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են.</p> <p>ա) ՀՀ-ում գների կայունության ապահովումը</p> <p>բ) ՀՀ արժույթի թողարկումը</p> <p>գ) ֆինանսական կայունության ապահովումը</p> <p>դ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը</p>	<p>միայն ա) տարբերակը</p>
		<p>միայն ա) և գ) տարբերակները</p>
		<p>միայն բ) և դ) տարբերակները</p>
		<p>միայն ա) և բ) տարբերակները</p>
212	<p>Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են.</p>	<p>ԿԲ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ</p>
		<p>ԿԲ խորհրդի կամ նախագահի որոշմամբ</p>
		<p>ԿԲ խորհրդի և ՀՀ Կառավարության լիազոր մարմնի համատեղ որոշմամբ</p>
		<p>Ճիշտ պատասխանը նշված չէ</p>
213	<p>Նշել սխալ պատասխանը.</p> <p>Կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված վարկային կազմակերպության միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել.</p>	<p>որոշակի ժամանակաշրջանում վերակազմակերպման կամ զարգացման ծրագրի իրագործում</p>
		<p>շահաբաժինների վճարման կասեցում</p>
		<p>վարկային կազմակերպության սպասարկող անձնակազմի աշխատավարձի նվազեցում և պարզևավճարների դադարեցում</p>
		<p>գովազդի իրականացման սահմանափակում</p>
		<p>կենտրոնական բանկի հանձնարարարկանով վարկային կազմակերպությունը պարտավոր է ապահովել ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը վարկային կազմակերպության մասնակիցներին</p>
214	<p>Նշել սխալ պնդումը.</p> <p>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի.</p>	<p>կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում վերստուգվող անձի կողմից վերստուգող խմբի անդամներին կամ կենտրոնական բանկի այլ պաշտոնատար անձանց ժամանակավորապես տրամադրված փաստաթղթերի ապահովության և</p>
		<p>ստուգման հաշվետվությունը կազմվում է 2 օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են վերստուգվող անձի ղեկավարությանը</p>
		<p>վերստուգվող անձը, նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը տասնհինգօրյա ընթացքում ծանոթանում է հաշվետվությանը և ստորագրում այն «Հաշվետվության հետ ծանոթացել եմ» մակագրությամբ</p>

	215	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օենքի, վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել.	ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման ենթակա չէ.
			միայն ՀՀ դրամով և Կանոնակարգ 14-ով սահմանված առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը վերագնահատման ենթակա չէ.
			միայն ՀՀ դրամով
			ՀՀ դրամով և արտարժույթով, ընդ որում վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամի արտարժույթով համալրված մասը ենթակա է վերագնահատման միայն յուրաքանչյուր հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ին
	216	Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ.	կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են ԿԲ-ի և կառավարության լիազորված մարմնի իրավական ակտերով
			կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ
			եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ
			մասնագիտացված անձինք են բանկերը, օտարերկրյա բանկերի՝ ՀՀ-ում գործող մասնաճյուղերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ԿԲ-ի կողմից յիցենցիա ստացած այլ տնտեսվարող սուբյեկտները
	217	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, հաշվետվություն տրամադրող անձը կարող է իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն, եթե	ամկա են ցածր ռիսկի չափանիշներ
			հաճախորդը քաղաքական ազդեցություն ունեցող անձ է
			բոլոր պատասխանները սխալ են
			մնաց հնարավորություն հաշվետվություն տրամադրող անձի համար նախատեսված չէ.
	218	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաստատությունը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն	գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում ցածր ռիսկի չափանիշների ամկայության դեպքում
			երբ գործարքում կամ գործարար հարաբերության ընթացքում ներգրավված են ֆինանսական հաստատություններ

			գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բարձր շիսկի չափանիշների առկայության դեպքում
			երբ գործարքում կամ գործարար հարաբերության ընթացքում ներգրավված են խոշոր գումարներ
	219	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք պետք է իրականացնեն հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն	բարձր շիսկի չափանիշների առկայության դեպքում ցածր շիսկի չափանիշների առկայության դեպքում
			գործարար հարաբերություն հաստատելիս կամ մեկնագամյա գործարք կնքելիս
			գործարար հարաբերության ամբողջ ընթացքում
	220	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն դրամական փոխանցում իրականացնող հաշվետվություն տրամադրող անձինք պետք է մերժեն դրամական փոխանցման ստացումը, եթե դրամական փոխանցումը չի պարունակում	ա) փոխանցում կատարողի անունը, ազգանունը
			բ) փոխանցում կատարողի հաշվի համարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը)
			«ա» և «բ» կետերից որևէ մեկի առկայության դեպքում
			ճիշտ պատասխան նշված չէ
	221	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է պահպանեն առնվազն հինգ տարի	ա) հաճախորդի նույնականացման տվյալները բ) ներպետական և միջազգային գործարքների (գործարար հարաբերությունների) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի (գործարար հարաբերության) ամբողջական պատկերը վերականգնելու համար
			և «ա», և «բ» կետերում նշված տեղեկությունները
			նման պարտավորություն սահմանված չէ
	222	Նշել սխալ պնդումը. Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի.	բանկերը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպչական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը որոշակի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների կարող են հրապարակել տվյալ հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ

			օրենքի պահանջների խախտումներն առաջացնում են տուգանք՝ 500.000 դրամից մինչև 20.000.000 դրամը և կարող են առաջացնել օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն
223	Նշել սխալ պնդումը. Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են.		հրապարակել, եթե առկա է ԿԲ թույլտվությունը
			տրամադրել հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս բանկին ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր
			տրամադրել բանկում առդիտ իրականացնող առդիտորական կազմակերպությանը
			տրամադրել Կենտրոնական բանկին
224	Նշել սխալ պատասխանը. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով, երրորդ անձ չեն համարվում.		կենտրոնական բանկը
			վարկային կազմակերպությունները
			իրավապահ մարմինները
			բանկերը
225	Նշել սխալ պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի գործունեության խնդիրն է.		վարկային կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների մի մասի կամ դրանք ամբողջությամբ վաճառելը
			վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալն ավելացնելու կամ օրենքով սահմանված կարգով փոխառությունների միջոցով ներդրումների ներգրավմամբ վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը
			վարկային կազմակերպության ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու միջոցով վարկային կազմակերպության ֆինանսական կայունության վերականգնումը
			բաժնետերերի օրինական պահանջների բավարարումը
226	Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, ադմինիստրացիայի ղեկավարի դիմումի հիման վրա դատարանը կարող է անվավեր ճանաչել.		ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող երեք տարվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը
			ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող վեց ամսվա ընթացքում բանկի մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին) բաշխված շահութաբաժինները, նրանց կամ այլ անձանց օգտին անհատույց օտարված գույքը
			ադմինիստրացիայի նշանակմանը նախորդող մեկ տարվա ընթացքում ղեկավարներին վճարված աշխատավարձը
			ճիշտ պատասխանը նշված չէ

	<p>Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է. (ա) վարկային կազմակերպությունում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար (բ) վարկային կազմակերպության սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան (գ) վարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած ճանաչել (դ) վարկային կազմակերպության լիցենզիան ճանաչել անվավեր</p>	<p>միայն (ա) և (գ)</p>
227		միայն (ա) և (բ)
		միայն (բ) և (գ)
		միայն (ա) և (դ)
	<p>Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության սնանկության մասին դիմումով կենտրոնական բանկը դատարան է դիմում, եթե. (ա) վարկային կազմակերպությունում առկա են վարկային կազմակերպության անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը (բ) վարկային կազմակերպության ադմինիստրացիայի գործունեության ժամկետում ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները (գ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ վարկային կազմակերպությունը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել վարկային կազմակերպության միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս</p>	<p>միայն (ա) և (բ)</p>
228		միայն (բ) և (գ)
		միայն (գ),
		միայն (ա) և (գ)
	<p>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային կազմակերպության մասնաճյուղերի գրանցման դիմումը կենտրոնական բանկի նախագահը բավարարում կամ մերժում է.</p>	<p>տասնհինգօրյա ժամկետում</p>
229		մեկամսյա ժամկետում
		մեկամսյա ժամկետում, որը ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կարող է կասեցվել մինչև 3 ամիս ժամկետով
		կենտրոնական բանկը մասնաճյուղը չի գրանցում
	<p>Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, վարկային միությունները դրամական միջոցներ են ներգրավում.</p>	<p>իրենց հաճախորդներից,</p>
230		բացառապես իրենց մասնակիցներից,
		իրենց մասնակիցներից, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանցից,

			ճիշտ պատասխանը նշված չէ:
231	Համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, լիզինգային կազմակերպություններ են համարվում այն վարկային կազմակերպությունները, որոնք		բացառապես իրականացնում են լիզինգ, մասնագիտացված են ֆինանսական գործարքների մեջ, հիմնականում իրականացնում են ֆինանսական վարձակալության գործարքների կնքում,
			ճիշտ պատասխանը նշված չէ:
232	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, չեկը՝		ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը, չեկում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում որոշակի գումարը վճարել չեկը ներկայացնողին, վճարային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը, ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարելու չեկում նշված գումարը, ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է չեկ տիրապետողի իրավունքը ստանալ շահաբաժիններ ընկերության շահույթից:
233	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր կարող են կնքել՝		միայն բանկերը, միայն բանկերը և վարկային կազմակերպությունները, միայն բանկերը, վարկային կազմակերպությունները և մնացած տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող այլ առևտրային կազմակերպությունները:
			ճիշտ պատասխանը նշված չէ:
234	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, ո՞րն է սխալ՝		դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր, ֆինանսական գործակալի կողմից դրամական պահանջին հաջորդող զիջում չի թույլատրվում, եթե այլ բան նախատեսված չէ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով

			պարտապանը պարտավոր է ֆինանսական գործակալին վճարել՝ պայմանով, եթե նա հաճախորդից կամ ֆինանսական գործակալից գրավոր ծանուցում է ստացել դրամական պահանջը տվյալ ֆինանսական գործակալին զիջելու մասին, և այդ ծանուցման մեջ սահմանված է կատարման ենթակա դրամական պահանջը, ինչպես նաև նշված է այն գործակալը, ում պետք է վճարվի
			սխալ պատասխանը նշված չէ
	235	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ՝	ֆինանսական վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր,
			ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած սպառվող գույք,
			անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:
			անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման
	236	Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից, որն է սխալ՝ Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ	վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը,
			վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, անցնում է վարձակալի սեփականությանը,
			վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը առանց վճարի հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար.:
			վարձակալված գույքը, մինչև վարձակալության պայմանագրի ավարտը, պայմանագրով նախատեսված գինը վճարելուց հետո, չի անցնում վարձակալի սեփականությանը,
	237	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, փոխառության պայմանագիրը կնքված է համարվում.	նոտարի կողմից վավերացվելու պահից
			կողմերի ստորագրելու պահից
			դրամ կամ այլ գույք հանձնելու պահից
			կենտրոնական բանկում հաստատվելու պահից
	238	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, պետական փոխառության պայմանագրով որպես փոխառու կարող է (են) հանդես գալ.	Հայաստանի Հանրապետությունը և իրավաբանական անձինք
			Հայաստանի Հանրապետությունը

			Հայաստանի Հանրապետությունը և միջազգային կազմակերպությունները
			Հայաստանի Հանրապետությունը և օտարերկրյա կառավարությունները
	Նշել սխալ պնդումը. 239	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	պետական փոխառությունները կամավոր են
			փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր կամ բանավոր
			փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրան կամ այլ գույք հանձնելու պահից
			փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով
	240	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, վարկային պայմանագիրը կնքվում է.	բացառապես գրավոր
			բանավոր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ
			գրավոր կամ բանավոր՝ ըստ կողմերի համաձայնության ճիշտ պատասխանը նշված չէ
	241	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի.	փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր
			վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր
			դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը կնքվում է գրավոր
			բոլոր պատասխանները ճիշտ են
	242	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, բանավոր կարող է կնքվել.	վարկային պայմանագիրը
			գրավոր պայմանագիրը
			փոխառության պայմանագիրը
			ճիշտ պատասխանը նշված չէ
	243	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել.	յուրաքանչյուր սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ
			երկու և ավելի սեփականատերերի գրավոր համաձայնությամբ
			սեփականատերերի կեսից ավելիի գրավոր համաձայնությամբ
			բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ
	244	Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել.	դատարանի բույտվության հիման վրա
			մյուս սեփականատերերի գրավոր համաձայնությամբ
